



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13076  
ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԸՏ

№ 84

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 84

ԳՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ՇԱՐՔԱՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ  
= Ո Ւ =  
ՆՐԱՆՑ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

—————

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ — 1930



ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

№ 84

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 84

631.331


ԳՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ԺԱՐՔԱՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ**

**= Ո Ւ =**

**ՆՐԱՆՅ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

A 3932



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ — 1930**

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ԹԵՐԵՎԱՆՈՒՄ

---

Հրատ. № 1286 Գառ. № 261 Գրառեպ. № 4041 (բ) Տիրաժ 5000

## ՇԱՐՔԱՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒ- ԹՅՈՒՆԸ

«Այնտեղ, վորտեղ մի հասկ ե՞րբուհի  
մինչև այժմ, սրանից հետո պետք է  
բուսնի յերկուսը»:

Ի՞նչ պիտի անել շատ բերք ստանալու հա-  
մար:

Բացի հողը կանոնավոր մշակելուց, վոր  
բարձր բերք ստանալու ելական նախապայ-  
մաններից մեկն է, — գյուղատնտեսութեան  
նորագույն ձևերն առաջադրում են մի շարք այլ  
միջոցներ, վորոնց կիրառումը նույնպես այդ  
տեսակետից խոշոր նշանակութուն ունի: Այդ  
ձևերից մեկն է, իմիջի ալլոց, նաև շարքերով  
ցանելը: Արտասահմանում և Խ. Ռուսաստանում  
վաղուց է, վոր հացահատիկները շարքացանով  
են ցանում: Խ. Հայաստանում առաջին անգամ  
շարքացանով սկսել են ցանել 1925 թ. և այն  
եւ միայն ցուցադրական նպատակներով; վոր-  
պեսզի գյուղացիութեանը ցույց տան և համոզեն  
շարքացանի առավելութունները:

Շարքացան ե կոչվում ալն ցանքը, վարը կատարվում ե շարքերով: Շարքացան կարելի յե անել թե ձեռքով, թե մեքենաներով:

Շարքացան կարելի յե յեվ պեժք ե անել ցորենը, բամբակը, գարին, առվույսը, կարճոճիլը, լոբին, սիսեռը և այլն:

Ի՞նչ առավելություններ ունի Եարքացանը Եաղացանի համեմատությամբ:

Բամբակի Եարքացաններ. — Սկզբնական շրջանում (1925 թ.), յերբ ազրոնոմները ցուցադաշտեր եյին դնում բամբակի շարքացան մշակությունը մասսայականացնելու համար, գյուղացիք թերահավատությամբ եյին վերաբերվում նրանից սպասվելիք արդյունքներին: Չորս տարի անցնելուց հետո— 1929 թ. Հայաստանում 4500 հեկտար շարքացան բամբակ ե ցանվել, սակայն դա բավական չե: 1930 թ. նախատեսված ե ցանել 20,000 հեկտար բամբակ ե այդ ամբողջ տարածությունը պետք ե շարքացան անել: Շաղացանը տարիների ընթացքում մի պատուհաս ե յեղել բամբակացանների գրխին: Շարքացանը հնարավորություն ե տալիս ազատվելու այդ տանջանքներից: Շարքացան բամբակի մշակությունը շաղացանի համեմատությամբ հետևյալ առավելություններն ունի.

1. Շարքացանն եծանացնում ե քաղհանը, —

Շարքացանի դեպքում շարքերն իրարից անում են տարբեր լայնությամբ ու հեռավորությամբ, նալած հողի վորակին: Ավելի փուխը, բերրի և ուժեղ հողերում շարքերի միջի տարածութունը թողնում են 68 սանտ., յերբեմն և 73 սանտ., իսկ թույլ և միջակ հողերում 48—56 սանտ.: Այդ շարքերի միջի տարածութունները մնում են դատարկ: Ուրիշ բույսեր ցանել չի կարելի, վորովհետև նրանք կմնասեն բամբակին: Շարքերում, ինչասեղ կողի, բուսնում են մոլախոտեր: Շաղացան բամբակի արտը քաղհանելիս բամբակացանը 3-4 քաղհանի վրա ծախսում են 50 բունվորական որ, մինչդեռ շարքացանի դեպքում՝ մեկ ձիու կուլտիվատոր 2 բանվորով որական քաղհանում են  $1\frac{1}{2}$  հեկտար, իսկ բույսերի մոտ դոնված և շարքերի մեջ յեղած մոլախոտերը 4-5 կին մեկ որում՝ մեկ հեկտարը կքաղհանեն ամենայն հեշտությամբ:

Ստորև բերում ենք մեկ հեկտար քաղհանի ծախսը:

#### Շարքացան

Մեկ ձիուն որական . . . . .	3 ռ.
2 բանվորին, որական 1 ռ. 25 կ., . . . . .	2 ռ. 50 կ.
5 կին, որական 1 ռ., . . . . .	5 ռ.
Մեքենավի ծախս . . . . .	11 ռ.

Միջին թվով 3 անգամ քաղհանելը  
 կնտի 11 ո.  $\times 3$  . . . . . 33 ո.  
 2 բանվորին ճաշ, 75 կ. որական,  
 $2 \times 75$  . . . . . 1 ո. 50 կ.

---

Ընդամենը . . 34 ո.

### Շաղացան

3 անգամ քաղհանելու համար կպահանջվի 50 բանվորական ուր,  
 յուրաքանչյուր բանվորին 1 ո., 50 ո.  
 Այս գումարի մեջ յեթե ճաշելը հաշվենք, կստանանք  $50 \times 50$  կ. . 25 ո.

---

Ընդամենը . 75 ո.

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր շարքացանի քաղհանի ծախսը կրճատվում ես վելի քան 2 անգամ, դեռ չենք հաշվում այն, վոր մեկ ձին 3 բանվորով որական քաղհանում ե  $1\frac{1}{2}$  հեկտար, այլ վոչ թե մի հեկտար, ինչպես մենք դիտմամբ վերցրել ենք:

2. Շարքացանի դեպքում բույսերն ստանում են սոս լույս, սոս սափություն յեվ անելու ու զարգանալու համար ազատ պայմաններ:— Փորձերը ցուցն են տվել, վոր ինչքան բամբակը շատ լույս և սաքությունն ե ստանում, այնքան ել նա ուժեղ թափով ե աճում և տա.

լիս և հարուստ ճյուղավորում, վորոնք իրենց հերթին տալիս են շատ կնգուղներ—100—150, լերբեմն և 250 հատ: Շաղացանի դեպքում ցանքը կատարվում է խիտ, և չորս կողմից հարևան բույսի թփերը խանգարում են մեջտեղում բուսած ցողունի զարգանալուն. այդ դեպքում արևի ճառագայթներն ու տաքությունը քիչ չափով են թափանցում հողի մեջ, վորի հետևանքով ել ստեղծվում է սառնություն, ճյուղերը սեղմվում են ու իրար խեղդում: Այս հանգամանքն, իհարկե, անդրադառնում է բերքատվության վրա: Այդպես սեղմված ցողունների վրա 10—15 կընգուղից ավել չի լինում. լեղածներն ել ծաղկելուց հետո անկանոն շրելու ժամանակ կիսով չափ թափվում են, և դուրս է գալիս, վոր մեկ հեկտար ամենալավ հողից 2,459 տոննի փոխարեն ստացվում է 0,82 տոնն: Իսկ շարքացանի դեպքում դրությունը բոլորովին այլ է. թողնելով շարք շարքից 48—64 սանտ. հեռավորության վրա, իսկ շարքերի մեջ՝ բույսը բույսից 24—40 սանտ., իհարկե, նայած հողի վորակին, այդ դեպքում մենք բույսի համար ազատ զարգանալու և ուժեղ ճյուղավորվելու հնարավորություններ ենք ստեղծում: Այդ դեպքում արմատները մի կողմից ստանալով ազատ լույս և տաքություն և մյուս կողմից՝ ճյուղավորվելու լախ

հնարավորութիւնն, — տալիս են շատ կնգուղներ, վորից, անկանոն շրվելու ժամանակ, լեթե մի մասն ել թափվի, դարձյալ մեծ մասը կմնա: Այնպէս վոր հեկտարից 2,459—2,541 տոնն բամբակ կստացվի:

3. Շարքացահը սերմը ցանում է հավաւար. — Սերմը համահավասար խորությամբ հողի մեջ գցելը՝ բույսի հետագա աճեցողութեան տեսակետից, չափազանց մեծ նշանակութիւն ունի: Շաղպանի դեպքում սերմը ցրվում է հողի մեջ, ընկնում է տարբեր խորությամբ: Իրա հետեանքով ել ծլելու շրջանը տևում է 15 ուր և չբբբբբ տվելի:

Հայտնի չէ, վոր վնասատուները մատղաշ տերևներին ավելի յեն վնասում, քան արդեն մեծացած, հասունացած տերևներին, այդ իսկ պատճառով «չոռ»-ին, մանավանդ վերջերում ծրլած բույսերը, չեն դիմանում և շուտ են վնասվում, մինչդեռ շուտ ծլածները յերկար ժամանակ դիմանում են:

4. Շարքացանի դեպքում լիուլի հնարավորութիւնն է սեղծվում մեքենայով քաղհանել, շարքերի արանները 8 սանս. խորությամբ փրքրացնել, վորը նպաստում է բույսի փարթաւնալուն: — Շաղպանի դեպքում ամեն անգամ շրկուց հետո հողի չբբբբ կեղև է կապում,

գրանից բուսը խեղդվում է, հողն արագորճն չորանում, ջրի գուրջիացումը նույնպես արագ է կատարվում, վորի հետևանքով ստիպված են լինում բամբակը նորից ջրել: Իսկ դաշառային շրջաններում և առհասարակ հաճախ ջրելը վնասում է այն բույսերին, վորոնց գլխավոր բնատր հողի խորը շերտերը գնալով, այնտեղից էլ ստանում է իր սնունդը:

Մինչդեռ շարքացանի դեպքում ամեն անգամ ջրելուց հետո մենք հնարավորութիւն ունենք կեղև կապած հողի յերեսը քանդել, փրկորացնել և այդպիսով վոչնչացնելով մազականութիւնը՝ պահպանել խոնավութիւնը հողի մեջ: Շաղացանի դեպքում խիտ և անկանոն բուսած ցողունները հնարավորութիւն չեն տալիս հողը փրկորացնել ինչպես հարկն է, վորովհետև ցանքի այդ անկանոնութիւնը խանգարում է աշխատանքներին, դրա համար էլ շաղացանը 2—3 անգամ ավելի յեն ջրում, քան շարքացանը:

5. Մեծ նշանակութիւն ունի, յերթ ծածուկ փայելիս բանվորն ազատ արժանաբար կարողութիւն ունի. — Իս նախ արագացնում է աշխատանքը, և յերկրորդ՝ այդ աշխատանքը կատարվում է ավելի մաքուր: Այդ բանը հնարավոր է շաղացանի դեպքում: Բացի դրանից, այնտեղ ծածուկը հավասար կերպով է նստում բոլոր

տերևների վրա թե նրանց տակի կողմից և թե կողքերից: Յեզ փոխանակ մի բանվոր որական  $\frac{3}{4}$  հեկտար ծծումբ փշելու, շարքացանում մեկ բանվոր մեկ որում փշում և մեկ հեկտարից ավելի տարածութունն:

Նույնն ել կարելի չե ասել «չանաք»-ի վերաբերմամբ: Մեկ բանվորուհին շարքացանի դեպքում որական առաջին և յերկրորդ յերեսից հավաքում և 48—64 կիլոգ., իսկ շաղացանի դեպքում՝ 40—48 կլգր., վորովհետև առաջին դեպքում նա արագ շարժվելու և աշխատելու հնարավորութուններ ունի:

6. Վերջապես արհացանով ցանելիս քիչ սերմացու չե գնում: Մեքենայով ցանելիս հեկտարին գնում և 48—64 կիլոգր., շաղացան անելիս՝ 85—100 կիլոգր.:

Այս բոլորից պարզ յերևում և, թե ինչպես շարքացանը մի կողմից 50% պակասեցնում և բույսի մշակության ծախսերը և մյուս կողմից՝ բարձրացնում բերքը:

Վերն արդեն ասացինք, թե շարքացան կարելի չե անել մեքենայով և ձեռքով: Ձեռքով շարքացան անում են Ղուրղուղուլու շրջանի Թափաղիբի գյուղի բամբակացանները, նաև միջանի այլ շրջանների բամբակացանները: Սակայն ձեռքով կարելի չե անկել փոքր տարածութունների վրա, իսկ մեծ՝ 200—800 հեկտար տարածութունը վոչ մի միտք չկա ձեռքով

տնկել, վորովհետև նախ շատ բանվորական ձեռք  
կապահանջի, մոտ 8—10 մարդ. և յերկրորդ, վոր  
աշխատանքը կձգձգվի, մինչդեռ մեկ շարքացա-  
նը որական ցանուժ և 2 հեկտար տարածու-  
թյուն: Խոշոր կուլեկտիվ տնտեսություններում  
ձեռքով տնկելուց միանգամայն պիտի հրաժար-  
վել. բացի դրանից, խոշոր տնտեսություններ  
կազմակերպելով մենք աշխատում ենք հեշտաց-  
նել մարդկային աշխատանքը, այլ վոչ թե նրա  
համար նորանոր տանջանքներ ստեղծել:

Կա և բամբակ ցանելու մի ուրիշ ձև: Դա  
բներով ցանելն է, յերբ շարքերով, ինչպես շար-  
քացանի դեպքում, մեկը մյուսից 24—40 սանտ.  
հեռավորության վրա, նայած հողի հատկության,  
փոսիկներ են փորում և ամեն մեկ փոսում գը-  
ցում 4—6 հատ սերմ: Այդ ձևը նույնպես պետք  
է անընդունելի համարել, վորովհետև կարկուտ  
յեկած դեպքում մենք կարող ենք բերքից բոլո-  
րովին զրկվել:

Շարքացան ցանելիս սերմ չպետք է խնայել,  
վորովհետև յերբեմն սեքենան սերմը լավ չի  
թափում, և շարքը վատ է ցանվում. ավելի լավ  
է մեկ հեկտարին կես փութ ավելի սերմ ցանել  
և ապահով լինել, վոր նա կկանաչի, քան սերմ  
խնայես և բերք չստանաս:

Բամբակի շարքացան մեքենաները լինում

են միջանի տեսակ, այն է՝ մեկ շարքանի, յերկշարքանի, խառը շարքացան, յերբ մեքենան սերմի հետ միասին միաժամանակ ցանում ե նակ պարարտանյութեր: Կան նակ զանազան սիստեմների շարքացաններ, ինչպես՝ «Կանտոն», «Ավերի», «Բաններ» և խորհրդային արտադրութեան «Ռեկորդ» սիստեմի շարքացանը և այլն:

Սակայն այդ բոլոր տեսակի մեքենաների կատարած աշխատանքը միևնույնն է՝ անել ժապավենաձև շարքացան: Այդ բոլոր մեքենաներն ել վերևի կողմից ունեն մի արկղ կամ դուլլ, վորտեղ լցնում են սերմերը, և վորտեղից նրանք հատուկ անցքով ցած են թափվում:

Սերմը թափվում ե հետևյալ կերպ. մեքենայի վերին մասում ամրացված ե փայտարկղ («Բաններ» սիստեմի շարքացանի վրա) կամ յերկաթյա դուլլ («Ավերի» սիստեմի վրա): Յերբ ձին իր յետևից քաշում ե մեքենան, մեքենայի անիվը պտտվում ե, իր հետ միասին պտտեցնելով նակ արկղի կամ դուլլի մեջ ամրացրած պտտանը հատուկ յերկաթյա կողերով: Այդ պտտանը պտտվելով իր հետ տեղափոխում ե արկղի կամ դուլլի մեջ լցրած սերմերը և բերում ու մոտեցնում ե անցքին, վորտեղ և թափվում են սերմերը, այդտեղից ել նրանք թափվում են

ցած՝ հասուէկ խոզովակի միջով և ընկնում հողի մեջ՝ խոզովակի ծայրի լերկաթի (սոշնիկ) միջոցով փորված ակոսի մեջ, վորից հետո մեքենային այդ նպատակով ամրացրած 2 թևիկների միջոցով խակուէյն ծածկվում են հողով: Մեքենայի յետևի կողմից ել գնում և մի գլանակաձև անիվ, վորն իր ծանրությամբ ցանված տեղը մի փոքր ամրացնում և:

Այսպիսով, լեթե դույլի մեջ պտտանը չպրտըտվի, սերմը չի ցանվի. պետք և ուշադրությամբ հետևել, արդյոք սերմը թափվում և, թե վոչ, վորովհետև այդ դործողությունը կատարվում և բաց տեղ և ցանողի աչքի առաջ: Հաճախ և պատահում, վոր մեքենան չի ցանում. դրդապատճառը նույն պտտանն և. անմաքուր սերմացուն կամ սերմատար անցքի մեջ քար կամ փայտի կտոր ընկնելով կանգնեցնում են պտտանը: Այդպիսի դեպքերում մեքենան պիտի կանգնեցնել, քարը կամ փայտի կտորը հանել և ապա միայն շարունակել աշխատանքը: Պետք և խուսափել արկղը կեղտոտ սերմ լցնելուց, հակառակ դեպքում շարքերը քաշալ կամ բազմաթիվ չցանված տեղեր կմնան, վորով և բերքի կեսը կկորչի:

Մինչև այժմ ամենուրեք բամբակը ցանել են մեկ շարքանի մեքենայով, կան նաև լերկ-

շարքանի մեքենաներ, բայց դրանք չեն համապատասխանում այսօրվա մեր պայմաններին: Այժմ, յերբ բամբակագործական շրջաններում ծավալվում է համատարած կոլլեկտիվացումը, և բամբակացաններն իրենք ունեն խոշոր հողամասեր, մի շարքանի մեքենան մեր պահանջներին բավարարել չի կարող: Սակայն առայժմ բավարարվելով մեկ շարքանի մեքենաներով, նկատի ունենալով, վոր տակավին բազմաշարք մեքենաներ չկան, միևնույն ժամանակ վոչ մի բուսե աչքաթող չպետք է անենք բամբակագործութունը նույնպես լե թարկելու խոշոր մեքենայացման:

Այդ աշխատանքներով կզբաղվին մեր մեքենափորձակայանները, իսկ մեզ մնում է 1—3 շարքանի մարզը դարձնել 6 շարքանի, վորպեսզի այդ միջոցով կարողանանք հողի չերեսն աստիճանաբար հարթել, ձգտելով հետագայում վերացնել մարհոսը և փոխել ջրելու ձևը, վորովհետև այդ շարաբաստիկ մարկոսն ամեն բուսե արգելք է հանդիսանում հնձող մեքենաներին և սպառնում է հացահատիկների մշակության մեքենայացմանը:

Շարքացանի գործածության ժամանակ, բացի սերմատար խողովակին հետևելուց, պետք է հետևել նաև, թե մեքենայից չի՞ ընկել նաև վորևէ պտուտակ, յուզված է մեքենան թե վոչ,

և մեքենայի բանային միջոց էլ պիտի սերմացանի մոտ լինի, քանի վոր պնդողակաները հաճախ թուլանում են:

Հետևյալ թվերը ցույց են տալիս, թե Հայաստանում ինչպես տարեցտարի աճում է բամբակի շարքացան ցանքների տարածութունն ու շարքացանների քանակը:

Տարիներ	Շարքացան ցանքների տարածութունը	Շարքացան մեքենաների թիվը
1925	43	12
1927	242	34
1929	3500	300

Իսկ 1930 թ. նախատեսվում է միայն կուլտիվներում ունենալ 18000 հեկտար շարքացան ցանքեր:

### Յուրեցի յեվ այլ սերմերի ԵԱՐԲԱԳԱՆՆԵՐ

Սկզբում ասացինք, վոր շարքացան կարելի չէ անել մեքենայով և ձեռքով, սակայն հացահատիկների շարքացան ձեռքով չի կարելի անել, այդ վոչ մի միտք չունի:

Մինչև 1925 թ. 10. Հայաստանի գյուղացի-ությունը հացահատիկների շարքացանների մասին գաղափար չուներ, վորովհետև մինչև այդ պահանջված թվով ագրոնոմներ չենք ունեցել և, բացի դրանից, խորհրդայնացումից առաջ վոչ մի

կառավարութիւնն չի մտածել մեր յերկրի աշխատավոր գյուղացիութեան տնտեսական դրութիւնը բարձրացնելու և բարելավելու մասին: Յերբ 1928 թ. Խ. Հայաստանի համալսարանը առաջին շրջանավարտ գյուղատնտեսները սպեց, և մեր հարևան հանրապետութիւններէից մեզ մոտ աշխատելու լեկան մեծ թվով ազրոնոմներ, մեր կառավարութիւնը հնարավորութիւն ունեցավ հենց այդ տարվանից լայն կերպով կազմակերպել ազրոնոմութեան գործը, դրա հետնահ շարքացան ցանքերի կիրառման ձեռնարկուժը, և ահա ամենուրեք հիմնվեցին հացահատիկներէ և այլ կուլտուրաների ցուցադրական հողամասեր, դաշտեր, վորոնց միջոցով գյուղացիութիւնը տեսավ և համոզվեց նրա առավելութեանը:

Հատիկներէ շարքացանը տասնչակ տարիների պատմութիւնն ունի արտասահմանում և մեզ մոտ՝ Ռուսաստանում և այդ յերկրներում ել տարեցտարի ընդարձակվում և մեծանում են շարքացանների տարածութիւնները: Դրա պատճառն այն է, վոր բացի այն առավելութիւններէից, վերն ունի շարքացանը, ինչպես վերևում նկարագրեցինք, ապա նաև շարքացանը տնտեսում է սերմացուն: Հայաստանի դաշտային շրջաններում ընդունված է ամեն մեկ հեկտարին ցանել 222—256 կիլոգր. սերմ, իսկ Սար-

դարաբազի հողերում նույնիսկ հասցրել են 320 կիլոգր.: Մինչդեռ Ղուբդուղուլիի ագրո-  
կայանը մեկ հեկտարին շարքացանով ցանում է 96—112 կիլոգր. և բերք է վերցնում 3,27 տոնն,  
նույն գյուղի գյուղացիք մի հեկտարին ցանում են 222—233 կիլոգր. և բերք վերցնում անենա-  
շատը՝ 1,63—2,45 տոնն: Հացահատիկները շար-  
քացանով ցանելը յերկուստեք ձեռնաուլ լե—և՛  
ցանելու, և՛ բերք հավաքելու տեսակետից:

Այսպիսով, մեկ հեկտար ցանելիս տնտես-  
վում է 128 կիլոգր., իսկ բերքը մեկ հեկտարին  
ավելանում է 238—320 կիլոգր.: Հետևապես  
գյուղացին մեկ հեկտարից տնտեսում և ավելի  
բերք է ստանում 400 կիլո ցորեն, վորը լեթե  
պետական գնով հաշվենք, կարժենա ավելի, քան  
50 ռուբ.: Իսկ գյուղացու տնտեսութւան համար  
այդ գումարը քիչ նշանակութւուն չունի:

Մինչև այժմ, բացի խոշոր կուլեկտիվներից  
և խորհրդային տնտեսութւուններից, մեզ մտա-  
գործ են ածվել փոքր տեսակի ցորենի շարքա-  
ցաններ՝ ձիաքարշ և յեզաքարշ, այսպես կոչված  
«Նվվորախ» շարքացաններ:

Ցորենի շարքացանները լինում են դիսկա-  
վոր և սոշնիկավոր. դիսկավորն այն շար-  
քացանն է, վոր սերմի խողովակից սերմը թափ-  
վում է 2 դիսկի արանքը, վորոնցով և սերմը

ծածկվում ե հողով, իսկ սոշնիկավորն այն շարքացանն ե, վոր սերմն ընկնելով խողովակի մեջ, գլորվում ե խողովակի հետ ամրացրած յերկաթյա կոշկաձև խոփիկի մեջ, վորտեղից և ընկնում ե հողի մեջ. կոշիկներն առաջ շարժվելով իրենց լետևից գլորում են նաև հողը և այդպիսով ծածկում վայր ընկած սերմերը:

Ցորենի շարքացանները լինում են մեծ և փոքր՝ 8, 11, 17, 24 և այլն սոշնիկանոց. 11 սոշնիկանոցը զույգ ձիու. համար շատ հարմար մեքենա յե, թեպեսև նա լավ ե նաև զույգ չեզի համար. մի զույգ վատ, անուժ յեզները յերևիք չեն կարող աշխատեցնել 11 շարքանի «Յլվորտի» շարքացանը:

Մեքենան աշխատեցնում են 2 հոգի. մեկը ձիերն ե քշում և հետևում, վոր մեքենան ուղիղ գնա, գծից չընդվի, մյուսն ել գնում ե մեքենայի յետևից և անընդ՝ առնայուև ցանոդ ապալարատին՝ արդյոք լսվ ե աշխատում, թե վոչ, վորովհետև լինում են դեպքեր, յերբ սերմը շատ ե կեղտոտ լինում, փակում ե սերմը թափվելու անցքերը:

Այնտեղ, վորտեղ տրակտոր չի աշխատում, մենք խորհուրդ կտալինք գործածել խորհրդալին տիպի «Յլվորտի» 11 սոշնիկանոց ցորենի շար-

քացանները, վորովհետև նրանք և՛ ամուր են, և՛ պարզ կառուցվածք ունեն։

Շարքացանով ցանելիս, վորպեսզի արտում չցանված տեղեր չմնան, անհրաժեշտ է միշտ հիշել և յերբեք չմոռանալ հետևյալ հանգամանքը. մեքենան քշելիս մեքենայի առաջին անիվը միշտ պետք է դնա չետևի անիվի հետքով, վորովհետև յեթե առաջին անիվը հետքից դուրս գա և դեպի ձախ դնա, կնշանակի մեքենան ցանում է Ձ անգամ, իսկ յեթե դեպի աջ դնա, ուրեմն տեղը կմնա առանց ցանվելու։ Մակայն վորպեսզի մեքենան ուղիղ դնա, նրա առաջին մասի վրա կան հարմարեցրած Ձ փայտ, վորոնցով մի հողի ուղղում է մեքենայի ընթացքը։ Բայց հաճախ այդ փայտը մնում է անոգտագործելի, վորովհետև յեթե մեքենավարը մեքենան կանոնավոր կառավարի, ցանքն ել կանոնավոր կլինի։

Նախքան ցանելը սերմացուն պետք է զտել սերմագտիչ մեքենայով և ստուգել, վոր նրա մեջ մեծ և վորք քարեր կամ փայտի կտորներ չլինեն, այնուհետև սերմացուն լցնում են մեքենայի արկղի մեջ և հեկտարին ցանելիք քանակության համաձայն ուղղում են նաև մեքենայի վրա ամրացրած սլաքը, վորի վրա 1—10 նշանակված են թվեր։ Յեթե ուզում են մեկ հեկտարին ցանել 112 կիլոգր., ապա սլաքը դնում

են 7 թվականի վրա, չեթե 128 կիլոգր., 8-ի վրա և այլն: Կա մի ուրիշ ձև՝ վորոշելու, թե տվյալ սերմացվից մի հեկտարին քանի կիլոգր. կգնա: Բայց դրա համար պետք է հարցնել մոտակա ագրոկայանից:

Յորենի շարքացան մեքենայով անմշակ հողերում չի կարելի ցանել:

Շատ դեպքերում գյուղացիները հողը վարում են և դեռ մեծ կոշտերը կանոնավոր չջարդած, մեքենան տանում են ու կոշտերի մեջ գցում, վորով թե մեքենան է փչացում և թե ցանքը վատ կատարվում:

Յորենի շարքացանի համար հողը պետք է մշակված լինի կանոնավոր, կոշտերը հավի ձվից մեծ չպետք է լինեն. արտի միջից մեծ քարերը պիտի հավաքված լինեն և արտը մաքուր լինի զանազան մուխոտների մնացորդներից, վորոնք ընկնելով շարքացանի կողկածև մասերի արանքը՝ խանգարում են կանոնավոր ցանելուն: Կամ թե, վորպեսզի ցանքսին այդ խոտերը չխանգարեն, գործ են ածում դիակավոր շարքացաններ: Դիակերը կտրում են խոտը, և ցանքը կատարվում է կանոնավոր:

Ներկայումս մեր ժողովրդական անտեսությունն նույնպիսի խոշոր թափով է առաջ գնում, վոր միանգամայն անթույլատրելի չէ, և մնասակար


պիտի համարել դաշտավայրում ցորենի կամ այլ հատիկների ցանքը ձիով կամ լեզներով անելը: Խոշոր տնտեսությունում պետք է աշխատի խոշոր մեքենա, դրա համարել տրակտորի լետեից կապում են 3 մեքենա՝ հավասար լայնության դժով և այդպես ցանում:

Որական մեկ տրակտորը ցանում է 20 և ավելի հեկտար տարածություն:

Մեզ մոտ Հայաստանում հատիկների ցանքը պետք է կատարել 36 բերան շարքացաններից. այդ աշխատանքը հանձնարարված է Սարգսրաբադի մեքենա-տրակտորային կայանին:

Մեքենայի ձևին և կառուցվածքին, ինչպես և նրա մանրամասնություններին ծանոթանալու համար պետք է դիմել շրջանային ազրոնոմին:

Յուրաքանչյուր գիսակից հողաբաժանավոր պետք է իմանա, վոր գյուղացնեստության բուր կուլտուրական ձեվերն ու յեղանակները մեկը մյուսի հետ կապված են, ուսի, բացի բարեացան կասարելուց, պիտի կիրառել նայել այն բուր ագրոաբաժանակները, վորոնց միջոցով մեք կսիպենք հողին Տալ Ձ հասկ այնտեղ, վորտեղ մինչել այժմ մեկն է բուսել:









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրա



FL0038994

[054]

I  
13932

ԳԻՆԸ 4 ԿՈՊ. ՄԱՍ. (3/4 մասով ուղև)



Գր. Կուսաչյան

Сеялки и их значение

Госиздат ССР Армении  
Эривань—1930